ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 575-Ա 22 նոյեմբերի 2023 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տարածքային կառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի , <<Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի N 1863-Ն որոշումը

որոշում եմ՝

1. Մարզի մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցներում դասավանդող ուսուցիչներին հավելավճարներ տրամադրելու նպատակով Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին << ՀՀ գյուղական բնակավայրերում մինչև 100 աշակերտ ունեցող պետական ուսումնական հաստատություններում դասավանդող ուսուցիչներին հավելավճարի սահմանում» միջոցառման շրջանակներում տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 45 491 300(քառասունհինգ միլիոն չորս հարյուր իննսունմեկ հազար երեք հարյուր) ՀՀ դրամից 30 506 000 (երեսուն միլիոն հինգ հարյուր վեց հազար) ՀՀ դրամը վերաբաշխել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզային ենթակայության թվով 116(մեկ հարյուր տասնվեց) պետական հանրակրթական ուսումնական հաստատություններին՝ համաձայն հավելվածի:

2, Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար (գլխավոր ֆինանսիստ) Սևակ Խլղաթյանին՝ կնքել գումարի հատկացման պայմանագրեր:

X

ՌՈՒԲԻԿ ՆԱՎՈՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Подписано: NAVOYAN RUBIK 3708540077

Ռ. ՆԱՎՈՅԱՆ
Ք. Գավառ

--